ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 7

«02» 02 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 70 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին վերապահված գործառույթները հստակեցնելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասի 8-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 18.12.2019թ. N 70 հրամանի (այսուհետ՝ Հրաման) N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 11-րդ կետի 1-ին ենթակետում «գնումների» բառից հետո ավելացնել «դեպոզիտ հաշվի» բառերը.

2) 11-րդ կետում ավելացնել նոր՝ 14-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝

«14) Դատախազության դեպոզիտ հաշվի դրամային շարժի կազմակերպումը և ապահովումը:».

3) 20-րդ կետում՝

3.1) 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Ֆինանսական և բյուջետային կարգապահության ապահովում.».

3.2) 28-րդ ենթակետում ուժը կորցրած ճանաչել «կապի այլ տեսակների» բառերը.

3.3) 33-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«33) Գրասենյակային գույքի ձեռքբերման և պահպանման ապահովում.».

3.4) Ուժը կորցրած ճանաչել 39-րդ ենթակետը.

3.5) Ավելացնել նոր՝ 39-43-րդ ենթակետեր՝ հետևյալ խմբագրությամբ.

«39) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման բոլոր գործառույթների իրականացում.

40) Դատախազության դեպոզիտ հաշվին վճարվող գումարների հաշվառման քաղաքականության մշակում.

41) Դատախազության դեպոզիտ հաշվին առկա և մուտքագրվող գումարների հաշվառում, դասակարգում, վերահսկողություն և կառավարում.

42) հաշվետու տարվա ավարտին հաջորդող տարվա մինչև մարտի 31-ը Գլխավոր դատախազին Դատախազության դեպոզիտ հաշվի վերաբերյալ հաշվետվության ներկայացում.

43) իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթների իրականացում:»:

2. Հրամանի N 2 հավելվածի 16-րդ կետում ավելացնել նոր՝ 19.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«19.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

3. Հրամանի N 3 հավելվածի 16-րդ կետում ավելացնել նոր՝ 10.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«10.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

4. Հրամանի N 4 հավելվածի 16-րդ կետում ավելացնել նոր՝ 50.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«50.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N

1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

5. Հրամանի N 5 հավելվածի 17-րդ կետում ավելացնել նոր՝ 11.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«11.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

6. Հրամանի N 6 հավելվածի 17-րդ կետում ավելացնել նոր՝ 14.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«14.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

7. Հրամանի N 8 հավելվածի 16-րդ կետում ավելացնել նոր՝ 15.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«15.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

8. Հրամանի N 10 հավելվածի 18-րդ կետում ավելացնել նոր՝ 17.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«17.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

9. Հրամանի N 11 հավելվածի 16-րդ կետում ավելացնել նոր՝ 8.1-րդ ենթակետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«8.1) Պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի 11-րդ կետի համաձայն պատասխանատու ստորաբաժանման գործառույթների իրականացում.»:

10. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

11. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

12. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ